


Աւարտեցաւ Աստուծոյ Ծառայ Կարդինալ Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաճանեանի աճիւններուն կանոնական հետախուզութիւնը:

«Ես կոյր եմ, այլեւս ոչինչ կը տեսնեմ եւ պիտանի չեմ, սակայն երբ աչքերս ընդմիշտ փակեմ, այն ժամանակ ես պիտի կարենամ ձեզի օգնել»:



23 Փետրուար 2024-ին, առաւօտեան ժամը 11-ին, Ֆրանկիսկոս Սրբազան Պապին քահանայապետութեան ԺԱ. տարին, աւարտեցան Աստուծոյ Ծառայ Կարդինալ Գրիգոր-Պետրոս ԺԵ. Աղաճանեանի աճիւններուն կանոնական հետախուզութիւնն ու կնիքներուն զետեղումը փայտե դագաղին վրայ, որ կը պարունակէ բիրտեղայ մասնատուի մը. անոր մէջ զետեղուած են Աստուծոյ Ծառային մասունքները, որոնք մեծ բարեպաշտութեամբ տեղադրուած էին Զոռմի «Սուրբ Նիկողայոս» եկեղեցին «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» մատուռին մէջ:



Արարողութիւնը տեղի ունեցաւ սեղմ շրջանակի մէջ՝ գլխաւորութեամբ Ամենապատիւ եւ Գերերջանիկ Ռաֆայէլ-Պետրոս ԻԱ. Կաթողիկոս-Պատրիարքին, ներկայութեամբ Զայ Կաթողիկէ եկեղեցին եպիսկոպոսներուն, Զոռմի եկեղեցական ատեանին անդամներուն, որոնք ընկերացած էին մասնագետ բժիշկներ, ինչպէս նաեւ Զոռմի հայ համայնքին անդամներուն:

Արարողութեան ընթացքին ստորագրուեցան աճիւններուն հետախուզութեան պաշտօնական փակման փաստաթուղթերը:

Աստուծոյ Ծառայ Կարդինալ Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաճանեան Կաթողիկոս- Պատրիարքին սրբադասման դատին ծիրէն ներս, 20 Զոկտեմբեր 2023-ին, աճիւններուն

գծով սկիզբ առած հետախուզութեան աւարտով եւ արդիւնքով՝ կը հաստատուին Աստուծոյ Ծառային աճիւններուն վաւերականութիւնը, ինչպէս նաեւ լաւ պահպանուած վիճակը, որ կարելոր քայլ է Աստուծոյ Ծառային երանացման եւ սրբադասման դատին յաջողութեան:

Զոս կարելոր է ընդգծել, որ քանի Ս. Եկեղեցին պաշտօնական յայտարարութիւն մը տակաւին չէ կատարած Աստուծոյ Ծառային սրբութեան վերաբերեալ, հրապարակաւ կարելի չէ մեծարել անոր աճիւնները:

Աստուծոյ Ծառային մարմնին պահպանումը յարգանքի առարկայ է ու շօշափելի նշան՝ անոր հոգիին եւ ուսուցումին, ինչպէս ալ մեր մէջ անընդհատ ներկայութեան եւ անոր հանդէպ մեր մեծարանքին ու ջերմեռանդութեան արարք:


Արդարեւ, անցնող ամիսներուն, Ծիրանաւորին աճիւններուն հանդէպ ցուցաբերուած ուշադրութիւնն ու հոգատարութիւնը կ'արտացոլան յարգանքը, երախտագիտութիւնն ու սերը, զորոնք շատեր ունեցան անոր նկատմամբ:

Եւ քանիւնէր շնորհքն ունեցան անոր օգնելու իր կեանքին վերջին պահերուն եւ լսելու անոր սրտէն բխած խօսքը, թէ ինքը ծարաւի է ո՛չ թէ ջուրին, այլ՝ հոգիներու սրբութեան, աւելցնելով. «Ես կոյր եմ, այլեւս ոչինչ կը տեսնեմ եւ պիտանի չեմ, սակայն երբ աչքերս ընդմիշտ փակեմ, այն ժամանակ ես պիտի կարենամ ձեզի օգնել»:



The conclusion of the official investigation into the remains of the Servant of God, Cardinal Krikor Pedros XV Aghajanian.

“I'm blind, I can't see anything anymore and I'm no longer worthy, but when I close my eyes forever, then I'll be able to help you.”



In the eleventh year of the pontificate of His Holiness Pope Francis, the official investigation into the remains of the Servant of God, The seals were placed on the wooden coffin, which contains a crystal box, containing the remains of the Servant of God, which were placed with great piety in the “Saint Gregory the Illuminator” chapel of the “Saint Nicholas” Church in Rome.

On this occasion, the ceremony was held in a narrow circle, headed by His Beatitude Catholicos Patriarch Raphael Bedros XXI Minassian, and in the presence of the bishops of the Armenian Catholic Church and members of the Church of Rome, accompanied by specialized doctors, as well as members of the Armenian community in Rome.

During the ceremony, documents were signed to officially close the investigation into the remains.

Within the framework of the case for the beatification of the Servant of God, Cardinal Krikor Bedros It is an important step in the success of the call to beatify and declare the sainthood of the servant of God.

It is important to emphasize here that the remains of Cardinal Aghajanian cannot be honored publicly, as long as the Church has not yet issued an official statement regarding the holiness of the Servant of God.



Preserving the body of the servant of God is an object of respect and a tangible sign of his spirit and teaching. It is also a sign of his permanent presence in us, as well as our respect and honor for him.

In fact, over the past months, the attention and care given to the remains of Cardinal Aghajanian reflects the respect, gratitude and love that many have for him.

How many people had the grace to help him in the last moments of his life and to hear the words coming from his heart, that he was not thirsty for water, but for the holiness of souls, adding: *“I am blind, I cannot see anything anymore and I am no longer worthy, but when I close my eyes forever... Then I will be able to help you.”*